Իններորդ հաղորդում

Եկեղեցու խորհուրդը

Գրվածքների ընթերցում. Հյտ 10:7, Հռմ 16:25, Եփս 1:5, 9, 11, 22-23, 3:3-11, Ա Կրթ 6:17

I. Եփս 3:3-11 բացահայտում է, որ մենք կարող ենք փորձառաբար ապրել ու վայելել Քրիստոսին՝ որպես եկեղեցու խորհրդի:

II. Աստծու թաքցված մտահղացումը խորհուրդ է, իսկ այս խորհրդի վրայից ծածկոցը վերցնելը՝ բացահայտում. Աստվածաշունչը խոսում է խորհրդի բացահայտման մասին՝ Հռմ 16:25, Եփս 3:3, 5.

Ա. Քրիստոսի խորհուրդը՝ եկեղեցին, թաքցված էր այլ սերունդներում, բայց նորկտակարանյան դարաշրջանում այն բացահայտվել է՝ խ. 5:

Բ. Այս խորհուրդը բոլոր դարաշրջաններում թաքցված էր Աստծու մեջ, բայց հիմա նորկտակարանյան հավատացյալները, լուսավորված լինելով, կարող են տեսնել այն՝ խ. 9:

Գ. Քրիստոսի խորհուրդը բացահայտվել է առաքյալներին ու մարգարեներին իրենց հոգում հայտնության շնորհիվ՝ խ. 5.

1. Միաձուլված հոգին այն միջոցն է, որով Քրիստոսին ու եկեղեցուն վերաբերող նորկտակարանյան հայտնությունը բացահայտվում է առաքյալներին ու մարգարեներին:
2. Երբ մեր հոգին միաձուլվում է աստվածային Հոգու հետ, մեր հոգին դառնում է այն օրգանը, որին բացահայտվում է Քրիստոսի խորհուրդը՝ Ա Կրթ 6:17, Եփս 1:17, 3:5:

Դ. Եթե ուզում ենք տեսնել թաքցված խորհրդի բացահայտումը, պետք է ներամրապնդվենք մեր ներքին մարդու՝ մեր վերածնված հոգու մեջ, և Քրիստոսին թույլ տանք, որ Իր տունը հաստատի մեր սրտում՝ խխ. 14-17ա:

Ե. Հռմ 16:25 և 26-րդ խոսքերում Պողոսը խոսում է խորհրդի բացահայտման մասին. «Հիսուս Քրիստոսի քարոզության, ըստ այն խորհրդի բացահայտման, որի մասին դարաշրջանների ժամանակներին լռություն է պահպանվել, բայց որը հիմա հայտնի է դարձվել»:

III. Յոթերորդ փողը՝ որպես պատրաստված Եռամեկ Աստծու հավիտենական տնտեսության եզրափակում, ավարտում է խորհրդի ներկա դարաշրջանը. ուստի Հյտ 10:7-ում ասվում է. «Վերջացած է Աստծու խորհուրդը».

Ա. «Տեսիլքն ու մարգարեությունը կնքել» (Դնլ 9:24գ) նշանակում է փակել խորհրդի դարաշրջանը, այսինքն՝ վերջացնել Աստծու խորհուրդը (Հյտ 10:7, Ա Տմթ 3:9):

Բ. Ադամից մինչև Մովսես և Մովսեսից մինչև Քրիստոս տևած տնօրինություններում ամեն բան բացահայտված ու հայտնված էր, և ոչ մի խորհուրդ չկար:

Գ. Նույնը կլինի նաև հազարամյա թագավորության տնօրինությունում և նոր

երկնքում ու նոր երկրի վրա. ամեն բան բացահայտված կլինի, և այլևս ոչ մի խորհուրդ չի լինի:

Դ. Քրիստոսն Ինքը (Կոլ 2:2), եկեղեցին (Եփ 3:4-6), երկինքների թագավորությունը (Մտթ 13:11), ավետարանը (Եփ 6:19), այն, որ Քրիստոսը բնակվում է մեր մեջ (Կոլ 1:26-27), գալիք հարությունն ու սրբերի այլակերպումը և խորհրդի այս տնօրինության ավարտը (Ա Կրթ 15:51-52) խորհուրդներ են, որոնք ծածկված են եղել դարերի ընթացքում (Հռմ 16:25, Եփ 3:5, Կոլ 1:26):

Ե. Երբ յոթերորդ փողը հնչի, այս բոլոր խորհուրդները կավարտվեն, կվերջանան ու կդադարեն գոյություն ունենալուց:

Զ. Երբ յոթերորդ փողը հնչում է, ավարտվում է ոչ միայն երկրի հանդեպ Աստծու բարկության դատը, այլև Աստծու խորհուրդը:

Է. Քրիստոսի մարմնացումից մինչև հազարամյա թագավորությունն ընկած տնօրինության մեջ՝ եկեղեցու դարաշրջանում՝ շնորհքի դարաշրջանում, ամեն բան խորհուրդ է.

1. Քրիստոսի մարմնացումը՝ խորհրդի դարաշրջանի սկիզբը, խորհուրդ է՝ Ա Տմթ 3:16:
2. Քրիստոսն Աստծու խորհուրդն է՝ Կոլ 2:2:
3. Եկեղեցին Քրիստոսի խորհուրդն է՝ Եփ 3:4-6:
   ա. Քրիստոսը խորհուրդ է, և եկեղեցին՝ որպես Քրիստոսին արտահայտող Նրա Մարմինը, Քրիստոսի խորհուրդն է:
   բ. Քրիստոսն ու եկեղեցին՝ որպես մեկ հոգի, մեծ խորհուրդ են՝ 5:32, Ա Կրթ 6:17:
   գ. Եկեղեցու դարաշրջանի՝ խորհրդի դարաշրջանի ժամանակաշրջանում Քրիստոսը կառուցում է եկեղեցին՝ որպես Իր հարսը՝ Մտթ 16:18, Եփ 4:16, Հյտ 19:7-9:
4. Երկինքների թագավորությունը, Քրիստոսի ներքնակվելը, ինչպես նաև հարությունն ու սրբերի այլակերպումը՝ այս ամենը խորհուրդ են՝ Մտթ 13:11, Կոլ 1:26-27, Ա Կրթ 15:51-53:

IV. Եկեղեցու խորհուրդը վերջնական խորհուրդն է տիեզերքում.

Ա. Եկեղեցին թաքցված խորհուրդն է Աստծու հավիտենական տնտեսության մեջ՝ Եփ 3:9-11.

1. Տիեզերքի խորհուրդն Աստված է, Աստծու խորհուրդը Քրիստոսն է, իսկ Քրիստոսի խորհուրդը՝ եկեղեցին՝ Ծնդ 1:1, Հյտ 4:11, Կոլ 2:2, Եփ 3:4:
2. Եփ 3:4-ի համաձայն՝ եկեղեցին առանձնահատուկ տիտղոս ունի՝ «Քրիստոսի խորհուրդ»:
3. Նոր Կտակարանին նախորդող դարաշրջաններում եկեղեցու խորհուրդը թաքցված էր մարդկանցից. այն առաքյալներին ու հավատացյալներին բացահայտվեց միայն նորկտակարանյան դարաշրջանում՝ խ. 5, Կոլ 1:26:

4. Եկեղեցու խորհուրդը թաքցված էր անցյալ հավիտենությունից ամբողջ հինկտակարանյան ժամանակահատվածում, բայց նորկտակարանյան դարաշրջանում այն հայտնի արվեց Քրիստոսի բոլոր հավատացյալներին:
5. Նոր Երուսաղեմում Աստված հավիտենական ու լիակատար արտահայտություն է ձեռք բերում մարդու մեջ, որին Ինքը ստեղծել է. սա տիեզերքում եղող վերջնական խորհուրդն է՝ եկեղեցու խորհուրդը՝ Եփս 5:32:
6. Մեր հոգին պետք է լինի ուժեղ և իմաստությամբ ու հայտնությամբ լի, որպեսզի ճանաչենք եկեղեցու խորհուրդը՝ 1:17:
7. Քրիստոսի խորհուրդն ու եկեղեցու խորհուրդը մեծ ու խոր են:

Բ. Մեծ խորհուրդը՝ Քրիստոսը և եկեղեցին, տիեզերքի և մարդկային կյանքի իմաստն է՝ Հյտ 4:11, Եփս 5:32.

1. Աստծու մտադրությունը բոլոր բաները, ներառյալ մարդուն, ստեղծելիս այն էր, որ մարդը ձուլվեր Աստծու հետ եկեղեցին առաջացնելու համար՝ Զք 12:1, Եփս 3:9:
2. Աստծու սրտի ցանկությունը Քրիստոսի խորհուրդը՝ Քրիստոսի Մարմինը՝ որպես Քրիստոսի մեծացումն ու արտահայտությունը, ձեռք բերելն է՝ 1:5, 9, 11, 22-23:
3. Մարմնի կյանքը մեր հոգևոր փորձառության վերջնական բավարարությունն է՝ 5:30:
4. Դարերի ընթացքում Աստծու մեջ թաքցված խորհրդի տնտեսությունը եկեղեցու՝ որպես Քրիստոսի Մարմնի խորհուրդն է՝ 3:9-10:
5. Քրիստոսի խորհուրդն ու եկեղեցու խորհուրդը պետք է լինեն մեր ամենօրյա կյանքը. առանց այս խորհրդի՝ մեր կյանքը կլիներ սոսկ մարդու կյանք, ոչ թե քրիստոնյայի կյանք՝ խ. 4, Ա Տմթ 3:15-16:

© 2024 Living Stream Ministry